

Նավելված

Նաստարված է  
Նայաստրանի Նանրապետության հանրային  
ծառայությունները կարգավորող հանձնաժողովի  
2007թ. հունիսի 15-ի № 274Ն որոշմամբ

**ԵՐԿԴՐՈՒՅՔ ՍԱԿԱԳՆԱՅԻՆ ՆԱՄԱԿԱՐԳՈՒՄ  
ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԻԱՅԻ (ՆԶՈՐՈՒԹՅԱՆ) ԱՌՈՒՎԱՃԱՌՔԻ  
ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ ՆԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ՍԱՆՄԱՆՄԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ**

Սույն սկզբունքները տարածվում են էլեկտրաէներգիայի (հզորության) արտադրության լիցենզիա ունեցող այն անձանց (այսուհետ՝ ընկերություն) վրա, որոնց նկատմամբ կիրառվում է երկդրոյք սակագնային համակարգ:

1. Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատորի լիցենզիա ունեցող անձը (այսուհետ՝ համակարգի օպերատոր) իրականացնում է էլեկտրաէներգետիկական համակարգի տարեկան պլանավորումը, կազմում է էլեկտրաէներգետիկական համակարգի էլեկտրական էներգիայի և հզորության հաշվեկշիռները (ամսական կտրվածքով) և ընկերության հետ համաձայնեցված որոշում է փվյալ տարվա ընթացքում ներքին պահանջարկի բավարարման և անհրաժեշտ համակարգային ռեզերվների ապահովման համար ներգրավվող հիմնական սարքավորումների կազմը:
2. Ընկերությունը համակարգի օպերատորի համաձայնությանն է ներկայացնում տարեկան ծրագրով նախատեսված սարքավորումների նորոգումների իրականացման ծրագիրը և ժամանակացույցը:
3. Յուրաքանչյուր ընկերության համար փվյալ ամսվա էլեկտրաէներգիայի (հզորության) առուվաճառքի պայմանագրային հզորություն է համարվում հաշվարկային տարվա որևէ ժամանակահատվածում համակարգի օպերատորի կողմից ներգրավված սարքավորումների անվանական հզորությունների գումարի առավելագույն մեծությունը՝ առանց փվյալ ամսում նորոգման դուրս բերված սարքավորումների անվանական հզորությունների գումարի:
4. Ընկերության կողմից էլեկտրաէներգիայի (հզորության) առուվաճառքի պայմանագրային պարտավորությունները համարվում են կատարված, եթե փվյալ ամսվա պայմանագրային հզորությունների կազմում ընդգրկված սարքավորումները տեխնիկապես սարքին վիճակում գտնվում են համակարգի

օպերատորի փրամադրության փակ և պատրաստ են զարգացնել նրա կողմից պահանջվող հզորությունը:

5. Նամակարգի օպերատորի կողմից պահանջվող հզորությունը չի կարող գերազանցել սարքավորումների էներգետիկ բնութագրերով որոշվող այն առավելագույն հզորությունը, որը փվյալ սարքավորումը կարող է զարգացնել, հաշվի առնելով արտաքին սահմանափակող գործոնները (պայմանները)՝ ջերմային ու ատոմային կայաններում և ջրի ելքը՝ հիդրոէլեկտրակայաններում:
6. Սարքավորումների կամ շինությունների փեխնիկական վիճակի կամ վառելիքի անբավարար քանակի պատճառով պայմանագրային հզորության սահմանափակումները համարվում են էլեկտրաէներգիայի (հզորության) առուվաճառքի պայմանագրային հզորության խախտումներ: